ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
10 ՄԱՐՏԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 26 անդամներ:

Բացակա էր Նորայր Սարգսյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Զովունի, Պռոշյան, Զորավան, Արագյուղ, Բուժական և Սարալանջ բնակավայրերի վարչական ղեկավարները, աշխատակազմի աշխատակիցներ Թելուշ Հովհաննիսյանը, Բենիամին Թադևոսյանը, Բաբկեն Բեգլարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Հարությունյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

Մինչև նիստի օրակարգի ներկայացումը <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության քարտուղար Քրիստինե Մանուկյանը ելույթ ունեցավ՝ նշելով, որ նիստի օրակարգային հարցերից բացակայում է խմբակցության կողմից ներկայացված <<Նաիրի համայնքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին>> հարցը, ինչպես նաև օրակարգային որոշ հարցերի վերաբերյալ առկա են թերությունները: Ելույթից հետո խմբակցության 8 անդամները լքեցին նիստերի դահլիճը՝ չմասնակցելով նիստի օրակարգային հարցերի քննարկմանը:

1.Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ, 16-րդ հոդվածների՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի 2022 թվականի մարտի 10-ի նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին.

2) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին.

3) Նաիրի համայնքի Քասախ գյուղի սգո սրահը և հանդիսությունների դահլիճը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու, վարձավճարի չափ սահմանելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

6) Նաիրի համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

7) Եղվարդ համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագրի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

8) Նաիրի համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

9) Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 8-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Բուժականի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

11) Նաիրի համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին.

12) <<ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԲԸ-ի հետ կնքված հողի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին.

13) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

14) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

15) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

16) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

17) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

18) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

19) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

20) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

21) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

22) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

23) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

24) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

25) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

26) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

27) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

28) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20/

2.Լսեցին

Նաիրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին.

/ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Հարությունյանը ներկայացրեց հանրային լսումների, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի նիստում և ավագանու մշտական հանձնաժողովներում համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի քննարկումների ընթացքում կատարված առաջարկությունները.

- Զովունու բուժամբուլատորիայի վերանորոգման համար գումար նախատեսել.
- Համայնքի հնգամյան զարգացման ծրագրով նախատեսված Զովունու վարչական շենքի և հարակից գոտու համար նախատեսված վերանորոգման գումարը հատկացնել առավել կարևոր ծրագրեր իրականացնելու համար.
- Եղվարդի սելաֆատարերի վերանորոգումը փոխել մաքրման աշխատանքների.
- Ավտոաշտարակի ձեռքբերում համայնքի կարիքների համար.
- Զովունու մանկապարտեզի բակի բարեկարգում.
- Սմարթ գրադարանի ստեղծում.
- Դպրոցների համար վարժասարքերի ձեռքբերում:
- Ներհամայնքային տրանսպորտի երթուղու գործարկում.
- Համայնքի մարզադաշտերի կառուցման համար ՈՒԵՖԱ-ի հետ համագործակցություն և այդ նպատակով նախատեսված գումարի ավելի արդյունավետ օգտագործում.
- Հաշմանդամ երեխաների բուժման, նրանց վերականգնողական ծախսերի համար գումարի նախատեսում.
- Քասախի գետնանցումի վրա վերնանցումի կառուցում.
- Քասախից դեպի Երևան քաղաքի մետրոյի <<Բարեկամություն>> կայարանի ուղղությամբ տրանսպորտի գործարկում.
- Համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձի բարձրացում:

Քննարկումների արդյունքում որոշվեց ավտոաշտարակի ձեռքբերումը և համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձի բարձրացումը ընդգրկել համայնքի 2022թ. բյուջեում, իսկ Սմարթ գրադարանի ստեղծումը, դպրոցների համար վարժասարքերի ձեռքբերումը, մարզադաշտերի կառուցումը ընդգրկել 2023թ. ծրագրում:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 82-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21/

3.Լսեցին

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին.

/ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով 2022 թվականի փետրվարի 8-ին <<Կիոկուշին>> կարատեի ազգային ֆեդերացիայի նախագահ Սպարտակ Արտյոմի Գասպարյանի կողմից ներկայացված դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Նաիրի համայնքի Քասախ բնակավայրի <<Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա>>ՀՈԱԿ-ի մարզադահլիճը 150 քմ տարածքով կարատեի մարզումների համար՝ երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ օրերին՝ 18:30-21:00 ժամերին, 3 տարի ժամկետով <<Կիոկուշին>> կարատեի ազգային ֆեդերացիային վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

2. Սահմանել տարածքի վարձակալության արժեքը 1 քմ-ի համար 200 դրամ, ամսական վճարը՝ 30000 (երեսուն հազար) դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին <<Կիոկուշին>> կարատեի ազգային ֆեդերացիայի նախագահ Սպարտակ Արտյոմի Գասպարյանի հետ կնքել տարածքի վարձակալության մասին պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-2 Ձեռնպահ-1

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22/

4.Լսեցին

Նաիրի համայնքի Քասախ գյուղի սգո սրահը և հանդիսությունների դահլիճը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու, վարձավճարի չափ սահմանելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող սգո սրահը և հանդիսությունների դահլիճը սգո արարողությունների համար անվճար տրամադրելու վերաբերյալ:

2. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող հանդիսությունների դահլիճը այլ արարողությունների համար վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ և սահմանել յուրաքանչյուր արարողության համար 60000 (վաթսուն հազար) դրամ վարձավճար:

Կողմ-16 Դեմ-1 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23/

5.Լսեցին

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Քննարկումների արդյունքում որոշվեց համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցներով համայնքի կարիքների համար ձեռք բերել ավտոաշտարակ, ինչես նաև աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձը բարձրացնել հաստատված դրույքաչափի 20%-ի չափով:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 32 հոդվածի 5-րդ մասի՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեն:

2. Հաստատել համայնքի 2022 թվականի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված N 1-ի:

3. Հաստատել համայնքի 2022 թվականի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝համաձայն հավելված N 2-ի:

4. Հաստատել համայնքի 2022 թվականի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված N 3-ի:

5. Հաստատել համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված N 4-ի:

6. Հաստատել համայնքի 2022 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված N 5-ի:

7. Համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարվող հնարավոր վերաբաշխումների չափաքանակը սահմանել 2022 թվականի բյուջեի ընդհանուր ծավալի 20 %-ի չափով:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ն/

6.Լսեցին

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի ՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25/

7.Լսեցին

Նաիրի համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է***.

Հաստատել Նաիրի համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածներ 1- 9-ի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-5

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26/

8.Լսեցին

Եղվարդ համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագրի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82.1 հոդվածի՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է***.

Հաստատել Եղվարդ համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագրի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-3

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27/

9.Լսեցին

Նաիրի համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկանոմիկայի նախարարի 2000 թվականի հունիսի 2-ի N 102 հրամանի, հիմք ընդունելով գույքագրման հանձնաժողովի նախագահ Կարեն Հարությունյանի զեկույցը՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Նաիրի համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն 1-17 հավելվածների:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28/

10.Լսեցին

Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 8-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Նորմատիվ իրավական կետերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2022 թվականի հունվարի 25-ի N //3173-2022 գրությունը՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է.***

1. Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի <<Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին>> N 8-Ն որոշման վերնագրում <<հաստատելու>> բառը փոխարինել <<սահմանելու>> բառով:

2. Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 8-Ն որոշումը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:>>:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ն/

11.Լսեցին

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Բուժականի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով <<Բուժականի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի 2022 թվականի փետրվարի 24-ի N 5Ն գրությունը՝ ***Նաիրի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Կոտայքի մարզի <<Բուժականի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղվարդ համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 21-ի <<<<Բուժականի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը հաստատելու մասին>> N 8 որոշումը:

Կողմ-12 Դեմ-3 Ձեռնպահ-2

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30/

12.Լսեցին

Նաիրի համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ ***Նաիրի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Նաիրի համայնքի ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31/

13.Լսեցին

<<ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԲԸ-ի հետ կնքված հողի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Եղվարդ քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 26-ի N 25 և Եղվարդ համայնքի ղեկավարի 2012 թվականի հուլիսի 11-ի N 358 որոշումները <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ի (իրավահաջորդ <<Արդշինբանկ>> ՓԲԸ) և Եղվարդի համայնքապետարանի միջև 10 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

<<Արդշինբանկ>> ՓԲԸ-ին վարձակալության հանձնված, Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքի Երևանյան թաղամասի թիվ 1/1 հասցեի 07-004-0231-0049 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.0016 հա բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասի պայմանագիրը երկարաձգել 15 տարի ժամկետով 50000 (հիսուն հազար) դրամ տարեկան վարձավճարով:

Կողմ-14 Դեմ-1 Ձեռնպահ-2

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32/

14.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-19 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Պռոշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով <<ՖԼԱԳՄԱՆ>> ՍՊԸ-ին պատկանող 07-053-0331-0012 կադաստրային ծածկագրի 1.5981 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33/

15.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-31 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Պռոշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով <<ՖԼԱԳՄԱՆ>> ՍՊԸ-ին պատկանող 07-053-0316-0014 կադաստրային ծածկագրի 1.8774 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պառոշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պառոշյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34/

16.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-35 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Պառոշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Շուլի Հակոբյանին պատկանող 07-053-0383-0029 կադաստրային ծածկագրի 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պառոշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պառոշյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

17.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման

աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-78 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Վահագն Ռոբերտի Մելքոնյանին պատկանող 07-065-0282-0010 կադաստրային ծածկագրի 0.367 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36/

18.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-197 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով <<Ազատ միջազգային մանկավարժական նախաձեռնություն>> ՀԿ-ին պատկանող 07-065-0265-0061 կադաստրային ծածկագրի 0.67 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

19.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-318 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Սերգեյ Միրզոյանին պատկանող 07-029-0184-0017 կադաստրային ծածկագրի 0.15 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38/

20.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-358 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Արտաշես Կիրակոսյանին պատկանող 07-029-0185-0173 կադաստրային ծածկագրի 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39/

21.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-312 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Նարեկ Ասատրյանին պատկանող 07-029-0200-0119 կադաստրային ծածկագրի 0.11 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40/

22.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-320 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Թամարա Ավագյանին պատկանող 07-029-0215-0065 կադաստրային ծածկագրի 0.04295 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41/

23.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-15 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Կարեն Հակոբյանին պատկանող 07-029-0258-0028 կադաստրային ծածկագրի 0.07086 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

24.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման

աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-324 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Անդրիաս Ղուկասյանին պատկանող 07-029-0259-0045 կադաստրային ծածկագրի 0.63965 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43/

25.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-310 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Կարեն Ավագյանին պատկանող 07-029-0215-0055 կադաստրային ծածկագրի 0.1187 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44/

26.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-16 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Եղվարդ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 07-004-0212-0020 կադաստրային ծածկագրի 1.7761 հա մակերեսով ջրային հողերի նպատակային նշանակությունը փոխադրել հատուկ պահպանվող տարածքների՝ հանգստի համար նախատեսված հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 978-Ն որոշմամբ հաստատված Եղվարդի քաղաքի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45/

27.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-378 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով Դերենիկ Համբարձումյանին պատկանող 07-004-0502-0012 կադաստրային ծածկագրի 0.457 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 978-Ն որոշմամբ հաստատված Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46/

28.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-322 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով Անդրանիկ Մանջյանին պատկանող 07-004-0615-0004 կադաստրային ծածկագրի 0.048 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 978-Ն որոշմամբ հաստատված Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47/

29.Լսեցին

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-348 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով Հասմիկ Վարդանյանին պատկանող 07-004-0422-0006 կադաստրային ծածկագրի 0.648 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 978-Ն որոշմամբ հաստատված Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48/

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՌԱՖԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԽԱՉԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԼԻԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԽՈՍՐՈՎ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՍՈՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Զաքարյանը _____

Հաստատված
Նաիրի համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 10-ի N 21 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2022-2026թթ.
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատվել է համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 21 որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նաիրի համայնքը ձևավորվել է <<Վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 24.09.2021 թվականի ՀՕ 328-Ն օրենքի ընդունման և 05.12.2021 թվականին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում: Համայնքը ներառում է Եղվարդ քաղաքը, Զովունի, Զորավան, Քասախ, Պռոշյան, Բուժական, Արագյուղ, Սարալանջ գյուղերը:Համայնքի կենտրոնը Եղվարդ քաղաքն է:

Նաիրի համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, մարզի հարավ-արևմտյան հատվածում: Համայնքը արևելքից սահմանակից է Նոր Գեղի և Նոր Հաճըն բնակավայրերին, արևմուտքից՝ Նոր Երզնկա բնակավայրին, հարավից՝ Երևանին, հյուսիսից՝ Ապարան համայնքին: Հեռավորությունը մարզկենտրոն Հրազդան քաղաքից 39 կմ է: Մինչբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Նաիրի համայնքի բոլոր բնակավայրերը:

Աղյուսակ 1. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից և բարձրությունը ծովի մակերևույթից

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից	Բարձրությունը ծովի մակերևույթից
	Եղվարդ	-	
	Զովունի	10 կմ	
	Բուժական	22 կմ	

	Զորավան	6 կմ	
	Պառշյան	7կմ	
	Քասախ	6կմ	
	Արագյուղ	11 կմ	
	Սարալանջ	13 կմ	

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին:

Եղվարդ բնակավայրը հայտնի է հնագույն ժամանակներից, գտնվում է Արա լեռան հարավային ստորոտում: Առաջին գրավոր տեղեկությունները կապված են Մովսես Երկրորդ Եղվարդեցի կաթողիկոսի ընտրվելու կապակցությամբ՝ 574թ., ապա 603թ. հայ ազատագրական պատերազմի հետ: Եղվարդը եղել է գրչության կենտրոն: Այստեղ են ծնվել Մովսես Բ Եղվարդեցի (897-897թթ.) և Մաշտոց Ա Եղվարդեցի կաթողիկոսները: 14-րդ դարի սկզբին Եղվարդը եղել է ավերակ վիճակում, այն վերականգնել են իշխան Ազիզբեկը և նրա կին Վաղախը՝ կառուցելով Եղվարդի Սուրբ Աստվածածին եկեղեցին (1301թ.)

1972 թ. եղել է Նաիրիի շրջանի վարչական կենտրոն, 1995 թվականին ստացել է քաղաքի կարգավիճակ:

Զովունի բնակավայրը հիմնվել է նախկին Ապարանի շրջանի Զովունի գյուղից վերաբնակեցված բնակիչների կողմից: Զովունի գյուղը, որը գտնվում էր նախկին Ապարանի շրջանում, Ապարանի ջրամբարի կառուցման պատճառով՝ 1965-67թթ. ամբողջովին վերաբնակեցվեց Երևան քաղաքի նախկին Շահումյանի շրջանի վարչական տարածքում գտնվող 'Ամո' եզդիական գյուղին կից տարածքում, 1972 թվականի հրամանագրով վերանվանվել է Զովունի:

Զովունի գյուղը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում: Գյուղը գտնվում է մայրաքաղաքից 2 կմ, իսկ մարզկենտրոնից՝ Հրազդան քաղաքից, մոտ 58 կմ հեռավորության վրա:

Զովունի գյուղի տարածքում է գտնվում «Կարմիր Բերդ» կոչվող պատմամշակութային շինությունը, որը չնայած գտնվում է կիսաքանդ վիճակում, կարող է ծառայել

զբոսաշրջիկության համար, նրան հարող տարածքով (Հրազդանի կիրճում) հոսում է Հրազդան գետը, իր կանաչապատ և ծառապատ ափերով, գեղեցիկ տեսարաններով մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել զբոսաշրջիկների համար:

Պռոշյան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հարավ արևմտյան մասում: Արևելյան կողմից սահմանակից է Եղվարդ և Բասարկ բնակավայրերին (սահմանի երկարությունը 6.6 կմ), հարավային կողմից սահմանակից է Արագածոտնի մարզի Սասունիկ և Աշտարակ բնակավայրերին (սահմանի երկարությունը 9կմ), հյուսիսային կողմից՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանին (սահմանի երկարությունը 4 կմ): Պռոշյան բնակավայրը երիտասարդ բնակավայր է: Հիմնադրվել է 1960-ական թվականներին՝ Երևան –Աշտարակ մայրուղու ձախ մասում՝ խամ ու խոպան հողերի վրա: Հիմնադրման պահին ընդգրկված է եղել Աշտարակի շրջանի վարչական տարածքում: Հեռավորությունը քաղաքամայր Երևանից կազմում է 7 կմ, մարզկենտրոնից՝ 70 կմ, ՀՀ սահմանից 200 կմ: Պատմական տեղեկությունների համաձայն Պռոշյան բնակավայրի տեղանունը ոչ մի անգամ չի վերանվանվել: Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1250 մետր, վարչական տարածքը կազմում է 2176.4 հա, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները բարենպաստ է՝ քամիների միջին արագությունն է 5մ/վ: Բնակավայրի տարածքով անցնում են Երևան-Գյումրի ավտոմոբիլային ճանապարհները: Պետական սեփականություն հանդիսացող և համայնքային ենթակայության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 5 կմ, որից 5 կմ միջպետական և հանրապետական նշանակության է: Բնակավայրի տարածքով անցնում է Մասիս-Նուռնուս երկաթգիծը, որի վրա է գտնվում Պռոշյան կայարանը: Բնակավայրի տարածքում առկա են 1 ավտոճանապարհային, 1 երկաթգծի կամուրջներ:

Բուժական բնակավայրը տարածվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային մասում, Արա լեռան հանդիման: Երեք կողմից անտառապատ, ծաղկափթիթ լեռներ ու բլրաշարքեր են, իսկ դիմացը ծավալվում է Արարատյան դաշտի Մասիսների գագաթներով:

Խորհրդային կարգերից առաջ Բաբաքշին (Բուժականը) թուրքաբնակ էր: Թուրքեր էին ապրում նաև նրա շրջակա գյուղում, որոնց անուններն են միայն հիմա մնացել որպես Բուժականի հանդամասեր՝ Քյալաշքյանդ, Յուղաբլու, Սուալի, Քիրաշլի, Ահմադխան և այլն:

Սա Նիգ գավառի ամենածաղկուն մասն էր՝ իր հռչակավոր վանքերով: Բուժականից երկու-երեք կիլոմետր հյուսիս, լեռնալանջի անտառում է գտնվում Թեղինյանց հազարամյա վանքը (7-15-րդ դարեր): Պատերն ու գմբեթը կիսաքանդ են, բայց կանգուն մնացած սյուներն ու խոյակները ցույց են տալիս նրա վաղեմի փառքը:

Բուժական գյուղի նոր պատմությունն սկսվում է հազար ինն հարյուր քսաներկու թվականից: Մինչ այդ գյուղն անմարդաբնակ էր: Քսաներկու թվականից գյուղը վերաբնակվեց պատմական Հայաստանի տարբեր գավառներից՝ Մուշից, Բասենից, Ղարսից, Էրզրումից ինչպես նաև Պարսկաստանի Խոյ գավառից գաղթած հայերով:

Զորավան բնակավայրը կառուցվել է 1972 - 80 թթ. լքված «Խաչոյի գյուղ» բնակավայրի տարածքի վրա: Գյուղի կառուցման հիմնական նպատակը եղել է 11 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասունների մատղաշի աճեցման և բտման համալիրի ստեղծումը: Սկզբում անվանվել է Փոքրավան: Համալիրը նախագծային հզորության հասնելուց հետո վերանվանվել է Զորավան: Զորավան անվանումը տրվել է ի շնորհիվ տարածքում գտնվող VII դարի Գրիգոր Մամիկոնյան իշխանի կողմից կառուցված Զորավար եկեղեցու: Զորավան գյուղը գտնվում է Արայի լեռան արևելյան ստորոտում, մարզկենտրոնից գտնվում է 55 կմ հեռավորության վրա, Երևան քաղաքից՝ 25 կմ:

Արագյուղ բնակավայրը հիմնադրվել է 1828 թվականին Արևմտյան Հայաստանի Արծափ և Արճեշ գավառներից գաղթած մի խումբ հայ ընտանիքների կողմից : 1915 թվականին գյուղն ընդունել է նաև ցեղասպանությունից մազապուրծ հայ գաղթականներին: Մինչև 1946 թվականը գյուղը կոչվում էր Ղարաջորան:Գյուղը փռված է Արա լեռան փեշերին: Արագյուղի հեռավորությունը մարզկենտրոն Հրազդան համայնքից 25 կմ է, մայրաքաղաք Երևանից՝ 30 կմ:

Սարալանջ բնակավայրը կազմավորվել է 1921 թվականին՝ Արևմտյան Հայաստանի Մուշ գավառից գաղթած, 1915 թվականի ցեղասպանությունից մազապուրծ մի քանի հայ ընտանիքների կողմից; Սարալանջ գյուղը գտնվում է Երևանից 25 կմ հարավ, իսկ մարզկենտրոն Հրազդանից՝ 56 կմ հյուսիս-արևմուտք, փռված է Արա լեռան արևելյան ստորոտին, ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Նաիրի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 27 անդամներով: Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 141 աշխատակցից:

Նաիրի համայնքի ղեկավարի նստավայրն է քաղաք Եղվարդ, Երևանյան 1 հասցեում գտնվող համայքապետարանի վարչական շենքը: Այն հիմնանորոգվել է 2009 թվականին: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, կահույքը նորացված է հիմնականում 2009 թվականին: Համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

Համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 7 որոշմամբ սահմանվել են Նաիրի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը.

- Զովունի - գյուղ Զովունի, 1-ին փողոց, 133 շենք.
- Բուժական - գյուղ Բուժական, 1-ին փողոց, 2-րդ շենք.
- Զորավան - գյուղ Զորավան, 1-ին փողոց, 19 շենք.
- Արագյուղ - գյուղ Արագյուղ, 1-ին փողոց, 23 շենք.
- Սարալաջ - գյուղ Սարալանջ, 6-րդ փողոց, 2-րդ շենք.
- Քասախ – գյուղ Քասախ, Ս. Ջալալյան, հրապարակ 1.
- Պռոշյան- գ. Պռոշյան, Անդրանիկի փողոց, շենք 13

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի թիվ 3 որոշմամբ :

Աղյուսակ 4. Եղվարդի համայնքապետարանի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
	Համայնքի ղեկավար	1	1
	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	1
	Համայնքի ղեկավարի տեղակալ	2	2
	Համայնքի ղեկավարի օգնական	2	2
	Համայնքի ղեկավարի խորհրդական	2	2
	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	1
	Վարչական ղեկավար (Զովունի, Բուժական Զորավան, Պառջան, Քասախ, Արագյուղ, Սարալանջ բնակավայրերի)	7	7
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
	Աշխատակազմի քարտուղար	1	1
	Գլխավոր մասնագետ - իրավաբան	2	2
	Գլխավոր մասնագետ	9	9
	Գլխավոր մասնագետ ՔԿԱԳ	1	1
	Առաջատար մասնագետ ՔԿԱԳ	1	1
	Աշխատակազմի առաջատար մասնագետ	4	4
Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժին			
	Բաժնի պետ	1	1
	Բաժնի պետի տեղակալ	1	1
	Գլխավոր մասնագետ	3	3
	Առաջատար մասնագետ	5	5

Ֆինանսատնտեսագիտական բաժին			
	Բաժնի պետ	1	1
	Գլխավոր մասնագետ	4	4
	Առաջատար մասնագետ	1	1
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ			
	Բաժնի պետ	1	1
	Գլխավոր մասնագետ	2	2
	Առաջատար մասնագետ	2	2
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ			
	Բաժնի պետ	1	1
	Գլխավոր մասնագետ-սոց.աշխատող	3	3
	Գլխավոր մասնագետ	1	1
	Առաջատար մասնագետ	2	2
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ			
	Բաժնի պետ	1	1
	Գլխավոր մասնագետ	3	3
	Առաջատար մասնագետ	1	1
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ			
	Բաժնի պետ	1	1
	Գլխավոր մասնագետ	3	3
	Առաջատար մասնագետ	3	3

ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ			
	Բաժնի պետ	1	1

	Գլխավոր մասնագետ	3	3
	Առաջատար մասնագետ	1	1
	ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ		
	Բաժնի պետ	1	1
	Գլխավոր մասնագետ	3	3
	Առաջատար մասնագետ	1	1
	ԱՌԵՎՏՐԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺԻՆ		
	Բաժնի պետ	1	1
	Գլխավոր մասնագետ	2	2
	Առաջատար մասնագետ	2	2
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
	Վարորդ	1	1
	Հավաքարար	2	2
	Հավաքարար	7	7
	Պահակ	12	12
	Դռնապահ	1	1
	Զինապարտների գծով պատասխանատու	3	3
	Տնտեսվար	1	1
	Տեխնիկական հսկիչ	4	4
	Փորձագետ	5	5
	Գործավար	1	1
	Գործավար	5	5

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

	Անասնաբույժ	7	7
	Գյուղատնտեսության ոլորտի փորձագետ	3	3
	Ընդամենը	**141**	

Համայնքային ոչ առևտրային 14 կազմակերպությունների (ՀՈԱԿ-ներ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի թիվ 7 որոշմամբ (աղյուսակներ 1-14):

Աղուսյակ 1 <<Եղվարդի Թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 66

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Դրույքը
1	2	3	4
1	Տնօրեն	1	1
2	Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ	1	1.25
3	Բուժքույր	2	1.5
4	Երաժշտական ղեկավար	3	3
5	Դաստիարակ	12	15
6	Հոգեբան	1	1
7	Մեթոդիստ	1	1
8	Լոգոպեդ	2	2
9	Պարուսույց	3	2.5
10	Ֆիզկուլտ հրահանգիչ	3	2.5
11	Գլխավոր հաշվապահ	1	1
12	Գործավար	1	1
13	Տնտեսվար	1	1
14	Շեֆ խոհարար	1	1
15	Խոհարար	3	3
16	Խոհարարի օգնական	1	1

17	Օժանդակ բանվոր	2	2
18	Լվացարար	2	2
19	Դաստիարակի օգնական	12	13.2
20	Դռնապան	2	2
21	Պահակ	1	1.5
22	Հավաքարար	2	2
23	Դերձակ	1	0.5
24	Պահեստապետ	1	0.5
25	Փականագործ	1	1
26	Փականագործ-էլեկտրամոնտյոր	1	0.5
27	Հնոցապան (սեզոնային)	2	1
28	Հնոցապան-հսկիչ	1	1
29	Այգեպան (սեզոնային)	1	0.25
Ընդամենը		66	66.2

Աղուսյակ 2.

<<Զովունի գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 35

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Դրույքը
1	2	3	4
1	Տնօրեն	1	1
2	Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ	1	1
3	Բուժքույր	1	1
4	Երաժշտական ղեկավար	2	1.5
5	Պարուսույց	1	1
6	Ֆիզկուլտ հրահանգիչ	1	1
7	Դաստիարակ	6	7.5
8	Լոգոպեդ	1	1
9	Գլխավոր հաշվապահ	1	1
10	Տնտեսվար	1	1

11	Խոհարար	2	1.5
12	Խոհարարի օգնական	1	1
13	Օժանդակ բանվոր	1	0.5
14	Լվացարար	1	1
15	Դաստիարակի օգնական	6	6.6
16	Պահակ	1	1
17	Հավաքարար	1	0.5
18	Այգեպան /սեզոնային/	1	0.5
19	Փականագործ-էլեկտրիկ	1	1
20	Դերձակ	1	0.25
21	Դռնապահ	1	1
22	Գործավար	1	0.5
23	Պահեստապետ	1	0.5
Ընդամենը		35	32.85

Աղյուսակ 3.

<<Զորավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 21

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Դրույքը
1	2	3	4
1	Տնօրեն	1	1
2	Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ	1	0.5
3	Բուժքույր	1	0.75
4	Դաստիարակ	3	3.75
5	Երաժշտության դաստիարակ	1	0.75
6	Դաստիարակի օգնական	3	3.3
7	Պարուսույց	1	0.5
8	Ֆիզկուլտ հրահանգիչ	1	0.5

9	Գլխավոր հաշվապահ	1	1
10	Տնտեսվար	1	0.5
11	Խոհարար	1	1
12	Խոհարարի օգնական	1	0.5
13	Օժանդակ բանվոր	1	0.5
14	Դռնապահ	1	1
15	Լվացարար	1	0.5
16	Հավաքարար	1	0.75
17	Պահակ	1	1
Ընդամենը		21	17.8

Աղուսյակ 4.

<<Եղվարդի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 68

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Դրույքը
1	2	3	4
1	Տնօրեն	1	1
2	Ուսմասվար	1	0.5
3	Դաշնամուրի բաժնի վարիչ	1	0.5
4	Փոխտնօրեն տնտ. գծով	1	1
5	Մեթոդիստ	2	2
6	Գլխավոր հաշվապահ	1	1
7	Գեղ. բաժնի լաբորանտ	1	1
8	Գործավար	1	1
9	Հավաքարար	4	3.5
10	Պահակ	2	1.5
11	Խմբակային պարապմունքի ուսուցիչ	17	17/340ժ/
12	Անհատական պարապմունքի ուսուցիչ	30	30/660ժ/

13	Էլեկտրիկ	1	0.5
14	Դաշնամուր լարող	1	0.5
15	Երգչախմբի ղեկավար	1	1
16	Տնտեսվար	1	1
17	Օժանդակ բանվոր	1	1
18	Աշխատանքների կազմ. պատասխանատու	1	1
Ընդամենը		68	65

Աղուսյակ 5.

<<Զովունիի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 34

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Դրույքը
1	2	3	4
1	Տնօրեն	1	1
2	Ուսմասվար	1	0.5
3	Հաշվապահ	1	1
4	Հավաքարար	1	1
5	Խմբակային պարապմունքի ուսուցիչ	8	8/160ժ/
6	Անհատական պարապմունքի ուսուցիչ	15	15/330ժ/
7	Երգչախմբի ղեկավար	2	2
8	Գործավար	1	1
9	Դաշնամուր լարող	1	0.5
10	Տնտեսվար	1	1
11	Պահակ	1	1
12	Դռնապահ	1	1
Ընդամենը		34	32.5

Աղուսյակ 6.

<<Եղվարդի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 11

